ձեր պատգամաւոր Տուֆլին[1], մեզ ծանուցեց ձեր խօսքը, յանձնեց այն ինչ որ դուք ուղարկած էք եւ յայտնեց ձեր կողմից ձեր կարծիքը, թէ մենք ազգ չենք. յիրաւի այսպէս էինք մենք, մինչեւ հզօրն եւ բարձրեալն Աստուած մեզ Մուհամմեդի ձեռօք ուղիղ ճանապարհով տարաւ եւ իսլամի շնորհիւ մեզ ոչնչութիւնից, ստորութիւնից եւ տգիտութիւնից յետոյ զօրացուց: Ապա Տուֆլին հաղորդեց, որ դուք մեզ հետ խաղաղութիւն կը ցանկաք. ես եւ հաւատացեալք, որ ինձ հետ են, ոչինչ չունինք դորա դէմ. ես ուղարկում եմ Աբդուլռահման Ի. Ջազ Սուլամին, որ մեր աստուածաբաններից եւ Ղուրանագէտներից ամենակատարեալն է. նորա հետ միասին կը դնեմ ձեր ապահովութեան վերաբերեալ թուղթըս. եթէ հաճիք՝ նա ձեզ կը յանձնէ, իսկ եթէ չընդունէք, նա ձեզ բացէիբաց պատերազմ է յայտնելու, որովհետեւ Աստուած չի սիրէ անհաւատարիմներին:„

“Յանուն Աստուծոյ ամենագթասէրի եւ ամենաողորմածի. այս է Հաբիբ Ի. Մասլամայի Տփղիսի՝ Վրաց Հորմուզ երկրի՝ բնակչաց նւիրած թուղթը՝ յապահովութիւն ձեր կենաց, ընչից, վանօրէից, եկեղեցեաց եւ աղօթատեղերի այն պայմանով, որ դուք հպատակիք եւ ամէն ընտանիք ամբողջապէս մի դենար գլխահարկ վճարէ. դուք պարտաւոր էք մեզ նւիրել ձեր մտերմական խորհուրդը եւ օգնութիւնն Աստուծոյ եւ մեր թշնամեաց դէմ, հիւրընկալել ճանապարհորդին այն ուտելիքներով եւ խմիչքներով, որ ներեալ են Գրքի հետեւողներին, նորան ուղեցոյց ծառայել՝ առանց որ եւ է վնասի ձեզանից մէկին: Եթէ իսլամ ընդունէք, աղօթք անէք եւ աղ.քա-

---

[1] تفلی թերեւս կարդալու է تِفِلی θεόφιλος. Բելազուրի ունի نقلی որ հաւանօրէն կարդալու է نِقِلی Նիկողայոս: